

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻԶԵՎ «ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ՆԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

20 հոկտեմբերի 2009թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյնյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի սեպտեմբերի 4-ին ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի դիմումն է՝ մուտքագրված 2009 թվականի հոկտեմբերի 1-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ Կրանսպորտի եւ կապի նախարար Գ. Սարգսյանի գրավոր բացատրությունները, հեղափոխելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Նամաձայնագիրն ստորագրվել է 2009 թվականի սեպտեմբերի 4-ին՝ Նայաստանի Նանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ:

Ըստ համաձայնագրի՝ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը (այսուհետեւ՝ Բանկ) կենսական նշանակության ավտոճանապարհների 140 կմ երկարությամբ ընդգրկված հարվածներն արդիականացնելու եւ շինարարության ոլորտում ժամանակավոր աշխատատեղեր ստեղծելու ծրագրի (այսուհետեւ՝ Ծրագիր) իրականացման համար Նայաստանի Նանրապետությանը (այսուհետեւ՝ Վարկառու) փրամադրելու է 36.600.000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարի վարկ:

2. Վարկային համաձայնագրի բաղկացուցիչ մասն են կազմում երեք ժամանակացույց եւ մեկ հավելված, որոնցում ամրագրված են համաձայնագրի այն միջոցառումները, որոնց իրականացմանն ուղղվում է վարկավորումը, եւ համաձայնագրում ներառված սահմանումները:

3. Վարկային համաձայնագրով սահմանված են Վարկառուին փրամադրվելիք վարկի չափը, վարկի մարման եւ փակման ժամանակացույցը, վճարման արժույթի տեսակը: Վարկի հիմնագումարը պետք է մարվի կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր փարվա մայիսի 1-ին եւ նոյեմբերի 1-ին՝ 2019թ. նոյեմբերի 1-ից մինչեւ 2034թ. մայիսի 1-ը: Ընդ որում, 2019թ. նոյեմբերի 1-ից մինչեւ 2033թ. նոյեմբերի 1-ը մասնակի մարման բաժինը կազմելու է 3,33%, իսկ 2034թ. մայիսի 1-ին՝ 3,43%: Վարկառուի կողմից վճարման ենթակա սկզբնական վճարը հավասար է վարկի գումարի 0,25 փոկոսին (91.500 ԱՄՆ դոլարին համարժեք գումար):

4. Նամաձայնագրի համաձայն Վարկառուի կողմից յուրաքանչյուր ժամանակահատվածի համար վճարվելիք փոկոսավճարը պետք է հավասար լինի վարկի արժույթի համար սահմանված ԼԻԲՈՐ-ին՝ գումարած փափանցումների փարբերությունը:

5. Վարկային համաձայնագրով Վարկառուն պարտավորվում է պատշաճ եւ արդյունավետ իրագործել համաձայնագրի 1-ին ժամանակացույցում ամփոփված Ծրագրի նպատակները, 2-րդ ժամանակացույցում ամփոփված Ծրագրի

իրականացման միջոցառումները, պահպանել 3-րդ ժամանակացույցում ամփոփված վարկի մարման ժամկետները:

6. Նամաձայնագրի 2-րդ ժամանակացույցի Բաժին 4-ի Ա կետի 2-րդ ենթակետում ներկայացված աղյուսակի համաձայն Ծրագրի իրականացման համար փեդաբաշխված վարկի գումարը 36.508.500 ԱՄՆ դոլարին համարժեք գումար է, որը կազմում է ֆինանսավորման ենթակա ծախսերի 80%-ը: Վարկառուն պարտավորվում է իր միջոցների հաշվին համաֆինանսավորում փրամադրել մնացած 20%-ի չափով:

7. Սույն համաձայնագրով Նայասրանի Նանրապետությունն սրանձնում է նաև հետևյալ պարտավորությունները.

- Ծրագրի փետողության ընթացքում փարեկան բյուջեում ապահովի ճանապարհաշինության ոլորտի համար միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների պահպանման նպատակով անհրաժեշտ միջոցների առկայությունը,

- ՏԿՆ-ի միջոցով մինչև Ծրագրի ավարտը պետք է ԾԻԳ-ը և ՂԱՃՏ-ն ապահովի Բանկի պահանջները բավարարող աշխատակազմով, միջոցներով և իրավասություններով և նրանց հանձնարարի Ծրագրի իրականացման և համակարգման ընդհանուր կառավարման պարտավորությունը,

- ՏԿՆ-ի միջոցով պահպանի Իրականացման համաձայնագրի՝ Բանկին բավարարող ձեւն ու բովանդակությունը, պարզաճ կերպով կատարի Իրականացման համաձայնագրով սրանձնած իր բոլոր պարտավորությունները և չփոխանցի, չփոփոխի, չեղյալ չհայտարարի Իրականացման համաձայնագիրը կամ հրաժարվի դրանից՝ առանց Բանկի նախնական համաձայնության,

- ոչ ուշ, քան Վարկառուի պառլամենտի կողմից սույն Նամաձայնագրի վավերացումից երկու շաբաթ հետո բացի Ծրագրի հաշիվ Բանկի համար ընդունելի որևէ բանկում և այդ հաշվին մուտքագրի Վարկառուի՝ Ծրագրի համաֆինանսավորման գումարի 20%-ը,

- ապահովի, որ Ծրագիրն իրականացվի Նակալոռուպցիոն ուղեցույցների դրույթներին, ինչպես նաև Բանկին բավարարող բնապահպանական չափորոշիչներին և ուղեցույցներին համապատասխան,

- իրականացնի Ծրագրի առաջընթացի մոնիտորինգ և պարտաստի Ծրագրի մասին հաշվետվություններ՝ Ընդհանուր պայմանների դրույթների և Բանկի հետ համաձայնեցված ցուցանիշների հիման վրա: Ծրագրի յուրաքանչյուր հաշվետվություն պետք է ընդգրկի մեկ օրացուցային եռամսյակ և Բանկին ներկայացվի եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան 45 օր հետո,

- ապահովի ապրանքների եւ աշխատանքների գնումների կատարումը բացառապէս Գնումների ուղեցույցների Բաժին 1-ի պահանջներին համապատասխան:

8. Նամաձայնագրում ամրագրված են նաեւ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու կարգն ու ժամկետները: Ծրագրի ավարտի վերջնաժամկետը 2011 թվականի դեկտեմբերի 31-ն է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի սեպտեմբերի 4-ին ստորագրված՝ Նայաստանի Նանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 հոկտեմբերի 2009 թվականի

ՍԴՈ- 835